# Զինվորին



Բարև իմ սիրելի քաջ՛ զինվոր:Այս նամակը քեզ գրում Հաղրութից:Այսօր քո շնորհիվ է,որ ես խաղաղ դաս եմ պարապում:Ես աղջիկ եմ, ով պատրաստ է իր զինվոր քաջերի հետ պաշտպանել մեր երկիրը և քշել թշնամուն:Թող քո ուժեղ հարվածից դողա թշնամին:Ես գիտեմ, որ ձեզ համար շատ դժվար է, չէ՞ որ դուք կարոտում եք ձեր մայրերին,քույրերին:Ես ինձ զգում եմ հպարտ և պաշտպանված, քանի որ հայոց սահմանը հսկում է ձեզ նման արի,խիզախ,գեղեցկատես հայ զինվորը:Շատ զենք ունենալը չի նշանակում ուժեղ լինել:Ես վստահ եմ, որ ուժեղ և խելացի մարդիկ միշտ հաղթում են:Դու այսօր այն առիթներից մեկն ես, որով հպարտ է ցանկացած հայ:Եթե դու դիրքում ժպտում ես, քո ծնողները տանը լաց լինելու իրավունք չունեն: Դրսում գարուն է, ծաղկունք,իսկ սահմանին դեռ կյանք չապրած կյանք են խլում:Սիրելի՛ եղբայր,ես հավատում եմ քո բազկի ուժին,չէ՞ որ դու հետնորդն ես քաջ Վարդանի,աղեղնավոր Հայկի:Աստծո ձեռքը թող միշտ ձեզ վրա լինի:

*Հաղրութի միջնակարգ դպրոցի 6-րդ*

*դասարանի աշակերտուհի*

*Սահակյան Էլեն*